ԱՐՄԵՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ
ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Լոռու բաժանմունքի առաջատար մասնագետ, արդարադատության մայոր

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հոդվածում դիտարկումների և մասնագիտական վերլուծության հիման վրա փորձ է արված դասակարգել առավել հաճախ հանդիպող ընտանիքի տիպերը, դրանց և արտաքին միջավայրի, անչափահասի վարքի ու սոցիալականացման վրա ունեցած ազդեցությունը և միջոցներ ձեռնարկելը օրինախախտ վարքագծի կանխարգելումն առավել լուրջ հիմքերի վրա դնելու համար:

Հիմնաբառեր- *անչափահաս, ընտանիք, դաստիարակություն, օրինախախտում, սոցիալականացում, հասարակություն, ինքնահաստատվել:*

Ընտանեկան մթնոլորտը կամա թե ակամա ազդում է ընտանիքի բոլոր անդամների, առավել ևս այնտեղ ապրող անչափահաս անդամների վրա: Անչափահաս անձն իր ընտանիքում կարող է ձեռք բերել այնպիսի հատկություններ, որոնք հետագայում որպես բնավորության գիծ արտահայտվում են նրա վարքագծում: Ընտանիքը մեծ դերակատարում ունի անչափահասի դաստիարակության և ձևավորման գործում: Ծնողներն են, որ երեխայի համար համարվում են որպես օրինակ կամ կուռք[3; 214]: Երեխան, ապրելով ընտանիքում, տեսնում, սովորում և ընկալում է ամեն բան այնպես, ինչպես, որ նրա կոգնիտիվ և հուզակամային ոլորտներն են թույլ տալիս հասկանալ: Ինչպես մարդիկ, այնպես էլ ընտանիքները իրենց բնույթով տարբեր են: Ամուսինների միջև փոխհարաբերությունների շնորհիվ կարողանում ենք բնութագրել նրանց ընտանիքների տիպերը: Հայկական ընտանիքների մեծամասնությանը բնորոշ են ավանդական հատկանիշները՝ ազգասիրությունը, նվիրվածությունը, հարգանքը մեծերի նկատմամբ, երախտապարտությունը և այլն: Ընտանիքը, համարվելով անչափահասի համար դաստիարակության դարբնոց, միշտ չէ, որ երեխային տանում և սովորեցնում է այդ ամենը ժառանգելը, քանզի կան նաև ընտանիքներ, որտեղ ծնողների փոխհարաբերությունները երեխայի ենթագիտակցությունում առաջացնում են ցավ, կսկիծ և երբեմն նաև հակակրանք: Այսպիսով ընտանիքները կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

1) բարենպաստ ընտանիքներ, 2) սառը հարաբերություններով ընտանիքներ, 3) քրեածին հարաբերություններով ընտանիքներ, 4) կոնֆլիկտածին հարաբերություններով ընտանիքներ և 5) սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքներ:

Բարենպաստ ընտանիքներում սոցիալական ապահովության խնդիր չկա. ծնողները կարողանում են հոգալ երեխաների կարիքները՝ ստեղծելով բոլոր պայմանները նրանց նորմալ և բարեկեցիկ կյանքի համար: Նմանատիպ ընտանիքներում արվում է ամեն ինչ, որպեսզի երեխան մեծանա և լինի զարգացած, սակայն այդ ամենը ծնողները հաճախ անում են զուտ նրա համար, որպեսզի հետ չմնան ուրիշ ընտանիքներից, ցուցադրելով, որ իրենք էլ են զբաղվում իրենց երեխաների դաստիարակությամբ՝ չհասկանալով, որ հաշվի չառնելով երեխաների ընդունակությունները և հնարավորությունները՝ վնասում են երեխային, քանզի նա դա կատարում է դժկամորեն, միայն ցույց տալով ծնողին, որ լսում և կատարում է նրա ասածը: Հետագայում երեխա – ծնող այդպիսի փոխհարաբերությունները կարող են առաջացնել կոնֆլիկտներ:

Սառը հարաբերություններով ընտանիքներում, որքան էլ նյութական ապահովվածությունը բավարար հիմքերի վրա լինի, դա բավարար չէ երեխայի նորմալ սոցիալականացման համար, քանզի նմանատիպ ընտանիքներում ամուսինները մեկը մյուսի նկատմամբ սառն են, միմյանց չեն սիրում, յուրաքանչյուրը երեխայի դաստիարակությանը մոտենում է պարտադրված և յուրատիպ ձևով՝ հաշվի առնելով զուտ «ծնողական պարտականություն» ասվածը: Ծնողների նմանատիպ վարքագիծը չի կարող բացասաբար չանդրադառնալ երեխաների վրա, և նրանք դառնում են սառը, անտարբեր ու աստիճանաբար օտարանում իրենց ընտանիքներից:

Քրեածին հարաբերություններով ընտանիքներում, մեղմ ասած, ամեն ինչ դրված է շատ ցածր մակարդակի վրա, ինչն էլ իր բացասական ազդեցությունն է թողնում երեխայի և նրա դաստիարա-

կության վրա: Նմանատիպ ընտանիքներում երեխան մեծանում է ստի և կեղծիքի մթնոլորտում: Ծնողները խարդախ են, խաբեբա, իրենց եկամուտը ստանում են ոչ արդար ճանապարհով, և որքան էլ որ ընտանիքը նյութապես ապահովված լինի, միևնույն է, դա ձեռք է բերվում ոչ աշխատանքի և ոչ էլ արդար քրտինքի շնորհիվ: Այդ ամենը երեխան կամ չի հասկանում կամ էլ հասկանում է շատ ուշ, իսկ այդ ժամանակ այդ ամենը նրա համար դառնում է կյանքի կենսական ապահովության համար օրինաչափ գործողության դրսևորում:

Կոնֆլիկտածին ընտանիքներում վիճաբանությունները և ընտանական անախորժությունները ամուսինների միջև նրանց փոխհարաբերության անբաժանելի մասն են կազմում: Սովորաբար նմանատիպ ընտանիքները անկայուն են, ամուսիններից մեկի մոտ ծագում է «լիդերի» դերի ստանձնումը, որն իր բացասական ազդեցությունն է թողնում անչափահասի դաստիարակության գործում, քանզի ծնողներից յուրաքանչյուրը ձգտում է երեխային դաստիարակել իր կանոններով՝ նրա նկատմամբ ունենալով իր ազդեցությունը: Ինքնաբերաբար նման ընտանիքում մեծացող անչափահասի մոտ առաջանում է նեգատիվ վերաբերմունք ծնողների նկատմամբ և երեխան դառնում է ծնողների ցանկությունների կամակատարը:

Սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքներում սովորաբար կուլտուր-կրթական մակարդակը ցածր է, սոցիալապես անպաշտպան են. ծնողները, ելնելով իրենց առողջական կամ սոցիալական վիճակից, միշտ չէ, որ կարողանում են զբաղվել իրենց երեխաների դաստիարակությամբ, սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, որ նման ընտանիքներում մեծացող անչափահասը կարող է մեծանալ միայն բացասական հատկություններով օժտված:

Նշելով և տարանջատելով ընտանիքների տիպերը՝ կարելի է եզրակացնել, որ անչափահասի վրա միօրինակ միայն ազդեցություն չի կարող ունենալ ընտանիքում ստացած դաստիարակությունը[1;47-49]. չմոռանանք նաև այն, որ անչափահասը ընտանիքից զատ դաստիարակվում է նաև դրսում՝ հասարակության մեջ[2;172-194]՝ այնտեղից ստանալով ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններ իր սոցիալականացման ընթացքում: Սովորաբար անչափահաս անձը, երբ մտնում է շրջապատ, մեծ մասամբ համեմատում կամ համադրում է այն, ինչին ինքը ծանոթ է կամ էլ տեսել է իր ընտանիքում: Նրանք, մտնելով կյանք, յուրովի են պատկերացնում շփումը և փոխըմբռնումը շրջապատի այլ անձանց հետ: Նրանցից յուրաքանչյուրն իր զարգացածության և դաստիարակության շրջանակներում սկսում են կայանալ՝ ցանկանալով հաստատվել և հաստատել իրենց «ես» - ը, սակայն ոչ բոլորն են ձգտում վաղ ինքնահաստատման: Այսպիսով, անչափահասի համար բացվում է մի նոր աշխարհ, որտեղ զուգահեռաբար անցնում և խառնվում են իրար ընտանիքում ստացած դաստիարակությունը և շրջապատի ազդեցությունը: Այդ ժամանակ կողմնորոշվել շատ արագ և ճիշտ միշտ չէ որ հաջողվում է բոլորին: Նրանք, որոնք մեծացել են անհոգ իրենց ընտանիքներում՝ ապրելով բարեկեցիկ կյանքով, դաստիարակվելով միայն բացարձակ արժեքները գնահատելու հիման վրա, նրանց համար նոր շրջապատը, այլախոհ մտքերը և տարօրինակ պահվածքը թվում են խորթ, բայց որոշ դեպքերում էլ գնահատվում «լավ» արարք, քանզի այդպիսի պահելաոճը նրանց համար համարվում է «տղայական» և աչքի ընկնող: Սովորաբար նմանատիպ ընտանիքներում ապրած անչափահասները շուտ են դառնում խայծ նրանց համար, ովքեր կարողանում են վստահության միջոցով գայթակղել և փոխել դիմացինի մտքերը, իսկ նրանք, որոնք մեծացել են այնպիսի ընտանիքներում, որտեղ չկա սեր, համերաշխություն, այդպիսի ընտանիքներում դաստիարակված անչափահաս անձանց համար բավականին հեշտ է ինտեգրվել նոր շրջապատին և չկորչել այնտեղ: Այսպիսով, տարբեր ընտանիքներում մեծացած և դաստիարակություն ստացած անչափահաս անձինք կամա թե ակամա շփվում են միմյանց հետ՝ իրենք էլ չնկատելով, թե որքան են փոխվում՝ դառնալով ինքնուրույն, ինքնավստահ, և ցանկանում են, որ իրենք քիչ արժանանան դիմացինների դիտողություններին, դրա փոխարեն լինեն իրադարձությունների կիզակետում, արժանանան միայն գովասանքների և խրախուսվեն: Ցավոք, միշտ չէ, որ նրանց այդ ցանկությունները և նպատակները ունենում են իրենց դրական հետևանքները, քանզի որոշ դեպքերում այդ ամենը տանում է նրան, որ նրանց արարքներն ու քայլերը խրախուսվում են այն անձանց կողմից, որոնք ապրում են հանցագործ կյանքով և իրենց համար փնտրում այնպիսիներին, որոնք իրենց համար կարող են դառնալ թիրախ կամ էլ փոխարինող: Ներկա ժամանակների համար մեր հասարակության մեջ այդպիսիներին գտնելը և գայթակղելը շատ հեշտ է: Անչափահաս անձը, մեկ անգամ կատարելով հակաիրավական արարք և չպատժվելով, միաժամանակ այդ ամենից հետո ունենալով նաև նյութական «հաջողություն», դժվարանում է հետ կանգնել իր նոր շրջապատից, ինչպես նաև իր բռնած ուղուց, ինչն էլ իր հերթին թե՛ նրա և թե՛ նրա ընտանիքի համար ունենում է անդառնալի հետևանքներ: Ընտանիքը որքան առանցքային դերակատարում է ունենում իրենց զավակների դաստիարակության գործում, այնքան էլ կրկնակի հայտնվում է հասարակության ուշադրության

կենտրոնում, երբ իրենց անչափահաս երեխաներից մեկը կատարում է հանցագործություն, կամ դատապարտվում: Այն ընտանիքները, որոնց նպատակը իրենց զավակներին ազնվորեն դաստիարակելն է եղել, ավելի շատ են տուժում բարոյապես, քան այնպիսիները, որոնք իրենց զավակների համար եղել են, օրինակ, որպես հանցագործությունը գնահատողներ:

Որքան էլ որ ասվի, գրվի, միևնույն է դա կնշանակի միայն այն, որ այս ամենն արվում և ներկայացվում է զուտ «դիտորդ» լինելու նպատակով, սակայն եթե հաշվի առնենք, որ մենք ապրում և մեծանում ենք նույն հասարակությունում և կատարվող ցանկացած իրադարձություն, լինի լավ թե վատ, մերն է, ուրեմն այս ամենին պետք է նայել ոչ թե կողքից և գնահատական տալ, այլ անմիջական մասնակցություն ունենալ այս կարևորագույն խնդրի լուծման և դրա նվազեցման գործում: Անչափահասներին ճիշտ ճանապարհի վրա ուղղորդելը մեր յուրաքանչյուրիս պարտքն է, քանզի նրանք են համարվում մեր վաղվա օրը կրողները և ապագան: Առանց զլանալու և տրտնջալու պետք է հոգ տարվի նրանց նկատմամբ. դրա նպատակն է առողջ հասարակություն ունենալու ձգտումը: Հասարակության առողջ լինելը խթան է պետության զարգացման, հզորացման և մեր բոլորիս վաղվա լավ օրվա համար:

Այդ նպատակով էլ մենք յուրաքանչյուրս մեր գործով անտրտունջ կերպով սրբորեն կատարելու ենք այն, որպեսզի մեր հասարակության մեջ նվազեն ու ի վերջո վերանան այն արատավոր արարքները, որ կատարվում են անչափահասների կողմից:

Գրականություն

1. Հոգեբանություն, Ե.Ի.Իգնատև, Ն.Ս.Լուկին, Մ.Դ.Գրոմով, «Լույս», Երևան, 1972, 428 էջ:
2. Մանկավարժություն, մաս 2, 1987, Երևան, «Լույս», 441էջ, Յու.Կ.Բաբանսկու խմբագրությամբ:
3. Մանկավարժության ներածություն, Ն.Ե.Կովալյով, Բ.Ֆ.Ռայսկի, Ն.Ս. Սորոկին, Երևան, «Լույս» 1977, 228 էջ:

Армен Агабекян
Ведущий специалист Лорийского отделения отдела исполнения альтернативных видов наказаний уголовно-исполнительного управления министерства юстиции Республики Армения, майор юстиции

РЕЗЮМЕ

Мотивы преступлений, совершенных несовершеннолетними лицами

В статье, на основе наблюдений и профессионального анализа, сделана попытка квалифицировать часто встречающиеся типы семей – их воздействие и воздействие внешней среды на поведение и социализацию несовершеннолетних, и принятие мер для более серьезных основ предотвращения правонарушающего поведения.

Ключевые слова: *несовершеннолетний, семья, воспитание, правонарушение, социализация, общество, самоутверждение.*

Armen Aghabekyan
Leading specialist of Lori department of The Department of Execution of Alternative Types of Punishment of the Criminal-Executive Department of Ministry of Justice of the Republic of Armenia, Justice Major

SUMMERY

Motives for crimes committed by minors

The article, based on observations and professional analysis, attempt to qualify the common types of family - their impact and the impact of external environment on behavior and socialization of minors, and implementing measures for more serious foundations to prevent infringing activity.

Keywords: *minor, family, upbringing, transgression, socialization, society, self-assertion.*